# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62


**N 205 -11**
***04 մարտ 2011թ.***

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ
ԱՐՄԵՆ ՂՈՒԼԱՐՅԱՆԻՆ

Կից ուղարկվում են Դիլիջան քաղաքային համայնքի ավագանու 28.02.2011թ. նիստի թիվ թիվ 23-41 որոշումները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

*Կատ. ՀՀ Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ ' Սոնա Եգանյան*
*(+374 268) 2-25-85*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 23

*28 փետրվար 2011թ.*

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջան համայնքի 2010թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
3. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
4. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
5. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
6. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
7. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
8. Հատիք հատկացնելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
9. Գույքահարկի տույժից ազատելու մասին
Զեկ. Ա. Սանթրոսյան
10. Դիլիջանի քաղաքապետարան դիմած քաղաքի սոցիալապես անապահով վիճակում գտնվող

քաղաքացիներին դրամական օգնություն տրամադրելու մասին
Զեկ.Ա.Սանթրոսյան
11. Դիլիջան համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շինությունները Դիլիջանի համայնքի գույքացանկում ընդգրկելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
12. Գույքի օտարման մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
13. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 3376.0քմ ընդհանուր մակերեսով հողամասը կրկնաձուրդի ներկայացնելու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
14. Գետափնյա փողոցի թիվ 86/3 հասցեի ավտոտնակը և վերջինիս սպասարկման 49.3քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
15. Դիլիջանի Վասիլև փողոց թիվ 32/2 հասցեի 500.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
16. Դիլիջանի Մյասնիկյան փողոց թիվ 114/1 հասցեի 92.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին
Զեկ. Ա. Սանթրոսյան
17. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1275.0 քմ ընդհանուր մակերեսով թվով 3 հողամասերը վարձակալության իրավունքի մրցույթի ներկայացնելու, ինչպես նաև հողամասերի վարձակալության իրավունքի տարեկան վարձավճարների մեկնարկային գները հաստատելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
18. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1577.0քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքի մրցույթի ներկայացնելու, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը հաստատելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ՈՐՈՇՈՒՄ N 24**

*28 փետրվար 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2010Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով 2010թ. բյուջեի եկամուտների և ծախսերի տարեկան կատարման հաշվետվությունը և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածով ավագանուն վերապահված իրավասությունը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Դիլիջանի համայնքի բյուջեի եկամուտների տարեկան կատարողականը /հատված թիվ 1/:
2. Հաստատել Դիլիջանի համայնքի բյուջեի ծախսերի տարեկան կատարողականը /հատված թիվ 2/:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՍԻԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը ներկայացրեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
### (01.01. 2010թ. - 01.01.2011թ. ժամանակահատվածի համար)

| Եկամտատեսակները | Տարեկան հաստատված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում՝ վարչական մաս | ֆոնդային մաս | Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում՝ վարչական մաս | ֆոնդային մաս |
| 2 | 4 | 5 | 6 | 10 | 11 | 12 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 300,889.5 | 300,889.5 | 0.0 | 300,664.2 | 300,664.2 | 0.0 |
| այդ թվում՝ 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 70,216.0 | 70,216.0 | X | 70,701.7 | 70,701.7 | X |
| այդ թվում՝ 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից | 38,510.0 | 38,510.0 | X | 37,541.6 | 37,541.6 | X |
| այդ թվում՝Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 19,000.0 | 19,000.0 | X | 18,677.6 | 18,677.6 | X |
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 19,510.0 | 19,510.0 | X | 18,864.0 | 18,864.0 | X |
| 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | 17,000.0 | 17,000.0 | X | 17,613.6 | 17,613.6 | X |
| այդ թվում՝ Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 17,000.0 | 17,000.0 | X | 17,613.6 | 17,613.6 | X |
| 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ | 10,506.0 | 10,506.0 | X | 11,442.7 | 11,442.7 | X |
| 1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ | 4,200.0 | 4,200.0 | X | 4,103.8 | 4,103.8 | X |
| այդ թվում՝Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր | 4,200.0 | 4,200.0 | X | 4,103.8 | 4,103.8 | X |
| այդ թվում՝ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար | 1,200.0 | 1,200.0 | X | 989.0 | 989.0 | X |
| բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար | 3,000.0 | 3,000.0 | X | 3,114.8 | 3,114.8 | X |
| 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 161,346.9 | 161,346.9 | 0.0 | 161,346.9 | 161,346.9 | 0.0 |
| 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից | 161,346.9 | 161,346.9 | X | 161,346.9 | 161,346.9 | X |
| որից՝ ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 159,161.2 | 159,161.2 | X | 159,161.2 | 159,161.2 | X |
| գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 2,185.7 | 2,185.7 | X | 2,185.7 | 2,185.7 | X |
| 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 69,326.6 | 69,326.6 | 0.0 | 68,615.6 | 68,615.6 | 0.0 |
| 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ | 17,500.0 | 17,500.0 | X | 16,614.9 | 16,614.9 | X |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| այդ թվում՝ Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 7,200.0 | 7,200.0 | X | 7,157.5 | 7,157.5 | X |
| Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | 3,800.0 | 3,800.0 | X | 3,456.0 | 3,456.0 | X |
| Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 6,500.0 | 6,500.0 | X | 6,001.4 | 6,001.4 | X |
| **3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից** | **19,660.5** | **19,660.5** | **X** | **19,117.7** | **19,117.7** | **X** |
| Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | 2,900.5 | 2,900.5 | X | 2,900.5 | 2,900.5 | X |
| Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ | 16,760.0 | 16,760.0 | X | 16,217.2 | 16,217.2 | X |
| **3.5 Վարչական գանձումներ** | **30,666.1** | **30,666.1** | **X** | **31,410.6** | **31,410.6** | **X** |
| այդ թվում՝Տեղական վճարներ | 25,066.1 | 25,066.1 | X | 25,510.0 | 25,510.0 | X |
| Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 5,600.0 | 5,600.0 | X | 5,900.6 | 5,900.6 | X |
| **3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից** | **1,500.0** | **1,500.0** | **X** | **1,472.4** | **1,472.4** | **X** |
| այդ թվում՝Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | 1,500.0 | 1,500.0 | X | 1,472.4 | 1,472.4 | X |

*Համայնքի ղեկավար* Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

*ֆինանսական բաժնի պետ* Գ.ՂԱՎԹՅԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(գործառական դասակարգմամբ)
(01.01.2010թ. - 01.01.2011թ. ժամանակահատվածի համար)

| Բա-ժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Տարեկան հաստատված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ընդամենը (ս.7 + ս8) | այդ թվում վարչական բյուջե | այդ թվում ֆոնդային բյուջե | Ընդամենը (ս.13 + ս14) | այդ թվում վարչական բյուջե | այդ թվում ֆոնդային բյուջե |
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 12 | 13 | 14 |
| X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 334,542.1 | 300,889.5 | 33,652.6 | 6,356.9 | 300,319.3 | -293,962.3 |
| 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 122,339.1 | 86,339.1 | 36,000.0 | 98,123.1 | 86,105.0 | 12,018.1 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 01 | 1 | 0 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ | 111,320.1 | 75,320.1 | 36,000.0 | 87,219.4 | 75,201.3 | 12,018.1 |
| | | | որից՝ | | | | | | |
| 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | 111,320.1 | 75,320.1 | 36,000.0 | 87,219.4 | 75,201.3 | 12,018.1 |
| 01 | 3 | 0 | Ընդհանուր բնույթի ծառայություններ | 3,013.5 | 3,013.5 | 0.0 | 3,013.0 | 3,013.0 | 0.0 |
| | | | որից՝ | | | | | | |
| 01 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 3,013.5 | 3,013.5 | | 3,013.0 | 3,013.0 | |
| 01 | 6 | 0 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 8,005.5 | 8,005.5 | 0.0 | 7,890.7 | 7,890.7 | 0.0 |
| | | | որից՝ | | | | | | |
| 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 8,005.5 | 8,005.5 | | 7,890.7 | 7,890.7 | |
| 02 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 72.0 | 72.0 | 0.0 | 72.0 | 72.0 | 0.0 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 02 | 1 | 0 | Ռազմական պաշտպանություն | 72.0 | 72.0 | 0.0 | 72.0 | 72.0 | 0.0 |
| | | | որից՝ | | | | | | |
| 02 | 1 | 1 | Ռազմական պաշտպանություն | 72.0 | 72.0 | | 72.0 | 72.0 | |
| 04 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | -134,199.4 | 1,530.0 | -135,729.4 | -403,699.6 | 1,500.0 | -405,199.6 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 04 | 2 | 0 | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն | 1,530.0 | 1,530.0 | 0.0 | 1,500.0 | 1,500.0 | 0.0 |
| | | | որից՝ | | | | | | |
| 04 | 2 | 1 | Գյուղատնտեսություն | 1,530.0 | 1,530.0 | | 1,500.0 | 1,500.0 | |
| 04 | 5 | 0 | Տրանսպորտ | 684,270.6 | 0.0 | 684,270.6 | 432,565.9 | 0.0 | 432,565.9 |
| | | | որից՝ | | | | | | |
| 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 684,270.6 | | 684,270.6 | 432,565.9 | | 432,565.9 |
| 04 | 9 | 0 | Տնտեսական հարաբերություններ | -820,000.0 | 0.0 | -820,000.0 | -837,765.5 | 0.0 | -837,765.5 |
| | | | որից՝ | | | | | | |
| 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ | -820,000.0 | | -820,000.0 | -837,765.5 | | -837,765.5 |
| 05 | 0 | 0 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 37,100.0 | 30,100.0 | 7,000.0 | 30,078.1 | 30,078.1 | 0.0 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 05 | 1 | 0 | Աղբահանում | 37,100.0 | 30,100.0 | 7,000.0 | 30,078.1 | 30,078.1 | 0.0 |
| | | | որից՝ | | | | | | |
| 05 | 1 | 1 | Աղբահանում | 37,100.0 | 30,100.0 | 7,000.0 | 30,078.1 | 30,078.1 | |
| 06 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 65,160.0 | 28,460.0 | 36,700.0 | 59,527.9 | 28,293.1 | 31,234.8 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 06 | 1 | 0 | Բնակարանային շինարարություն | 26,700.0 | 0.0 | 26,700.0 | 23,629.9 | 0.0 | 23,629.9 |
| | | | որից՝ | | | | | | |
| 06 | 1 | 1 | Բնակարանային շինարարություն | 26,700.0 | | 26,700.0 | 23,629.9 | | 23,629.9 |
| 06 | 4 | 0 | Փողոցների լուսավորում | 38,460.0 | 28,460.0 | 10,000.0 | 35,898.0 | 28,293.1 | 7,604.9 |
| | | | որից՝ | | | | | | |
| 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | 38,460.0 | 28,460.0 | 10,000.0 | 35,898.0 | 28,293.1 | 7,604.9 |
| 08 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ | 119,109.8 | 39,427.8 | 79,682.0 | 101,441.5 | 39,362.2 | 62,079.4 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | այդ թվում՝ | | | | | |
| 08 | 1 | 0 | Հանգստի և սպորտի ծառայություններ | 2,000.0 | 0.0 | 2,000.0 | 800.0 | 0.0 | 800.0 |
| | | | որից՝ | | | | | |
| 08 | 1 | 1 | Հանգստի և սպորտի ծառայություններ | 2,000.0 | | 2,000.0 | 800.0 | | 800.0 |
| 08 | 2 | 0 | Մշակութային ծառայություններ | 116,759.8 | 39,077.8 | 77,682.0 | 100,357.1 | 39,077.8 | 61,279.4 |
| | | | որից՝ | | | | | |
| 08 | 2 | 1 | Գրադարաններ | 13,709.7 | 13,709.7 | | 13,709.7 | 13,709.7 | |
| 08 | 2 | 2 | Թանգարաններ և ցուցասրահներ | 48,881.3 | 1,581.3 | 47,300.0 | 41,558.1 | 1,581.3 | 39,976.8 |
| 08 | 2 | 3 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | 31,450.5 | 11,368.5 | 20,082.0 | 31,449.5 | 11,368.5 | 20,081.0 |
| 08 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 19,418.3 | 12,418.3 | 7,000.0 | 12,668.3 | 12,418.3 | 250.0 |
| 08 | 2 | 5 | Արվեստ | 2,300.0 | | 2,300.0 | 0.0 | | |
| 08 | 2 | 7 | Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում | 1,000.0 | | 1,000.0 | 971.5 | | 971.5 |
| 08 | 3 | 0 | Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ | 350.0 | 350.0 | 0.0 | 284.4 | 284.4 | 0.0 |
| | | | որից՝ | | | | | |
| 08 | 3 | 2 | Հրատարակչություններ, խմբագրություններ | 350.0 | 350.0 | | 284.4 | 284.4 | |
| 09 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 119,094.4 | 110,770.4 | 8,324.0 | 114,957.5 | 110,728.4 | 4,229.1 |
| | | | այդ թվում՝ | | | | | |
| 09 | 1 | 0 | Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն | 73,201.4 | 73,201.4 | 0.0 | 73,159.4 | 73,159.4 | 0.0 |
| | | | որից՝ | | | | | |
| 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 73,201.4 | 73,201.4 | | 73,159.4 | 73,159.4 | |
| 09 | 5 | 0 | Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն | 29,182.2 | 29,182.2 | 0.0 | 29,182.2 | 29,182.2 | 0.0 |
| | | | որից՝ | | | | | |
| 09 | 5 | 1 | Արտադպրոցական դաստիարակություն | 29,182.2 | 29,182.2 | | 29,182.2 | 29,182.2 | |
| 09 | 6 | 0 | Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ | 16,710.8 | 8,386.8 | 8,324.0 | 12,615.9 | 8,386.8 | 4,229.1 |
| | | | որից՝ | | | | | |
| 09 | 6 | 1 | Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ | 16,710.8 | 8,386.8 | 8,324.0 | 12,615.9 | 8,386.8 | 4,229.1 |
| 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 5,866.2 | 4,190.2 | 1,676.0 | 5,856.4 | 4,180.5 | 1,675.9 |
| | | | այդ թվում՝ | | | | | |
| 10 | 4 | 0 | Ընտանիքի անդամներ և զավակներ | 3,549.7 | 3,549.7 | 0.0 | 3,540.0 | 3,540.0 | 0.0 |
| | | | որից՝ | | | | | |
| 10 | 4 | 1 | Ընտանիքի անդամներ և զավակներ | 3,549.7 | 3,549.7 | | 3,540.0 | 3,540.0 | |
| 10 | 7 | 0 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 2,316.5 | 640.5 | 1,676.0 | 2,316.4 | 640.5 | 1,675.9 |
| | | | որից՝ | | | | | |
| 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 2,316.5 | 640.5 | 1,676.0 | 2,316.4 | 640.5 | 1,675.9 |

*Համայնքի ղեկավար* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Ֆինանսական բաժնի պետ* *Գ.ՂԱՎԹՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 25

*28 փետրվար 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2011թ. բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից կատարել հատկացում: Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել

- <Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում>/բաժին 01 , խումբ 01, դաս 01/

Հոդված 4111-3600.0հազ.դրամ,որից Iեռ.-360.0հազ.դրամ, IIեռ.-1440.0հազ.դրամ, IIIեռ.-2520.0հազ.դրամ, IV եռ. - 3600.0 հզ.դրամ

հոդված 4131–400.0հազ.դրամ,որից Iեռ.-40.0 հազ.դրամ,IIեռ.–160.0հազ.դրամ,IIIեռ.- 280.0 հազ.դրամ, IV եռ. - 400.0հազ.դրամ

- «Արտադպրոցական դաստիարակություն»/բաժին 09 , խումբ 05, դաս 01/ հոդված 4511-676.5հազ.դրամ, որից I եռ.-100.0հազ.դրամ., II եռ.-307.5հազ.դրամ, III եռ. – 492.0 հազ.դրամ, IV եռ. - 676.5 հազ.դրամ
- «Գյուղատնտեսություն» /բաժին 04 խումբ 02 դաս 01/ հոդված 4235 – 30.0հազ.դրամ, որից II եռ. – 15.0հազ.դրամ, III եռ.-23.0 հազ.դրամ, IV եռ. - 30.0 հազ.դրամ:
-

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 26

*28 փետրվար 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Շահումյան և Գայի փողոցների բազմաբնակարան բնակելի շենքի բնակիչները, խնդրանքով վերանորոգելու շենքերի տանիքները:
Ուսումնասիրությունից պարզվել է , որ քաղաքի Շահումյան փողոցի թիվ 9, թիվ 11, թիվ 13, թիվ 14, թիվ 16, թիվ 18, թիվ 22, թիվ 24, թիվ 26, թիվ 28, ինչպես նաև Գայի փողոցի թիվ 31, թիվ 33, թիվ 35 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքները տարիների ընթացքում չվերանորոգելու և բնակիչների անհոգի վերաբերմունքից գրեթե շարքից դուրս են եկել, տեղումներից առաջացած ջրերը ներ են թափանցում բնակարաններ ՝ մեծ վնաս հասցնելով թե բնակֆոնդին և թե խանգարում բնակիչների բնականոն կյանքին:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել նշված շենքերի տանիքների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների գնում՝ ներգրավելով համապատասխան մասնագիտական կարողություն ունեցող անձանց:
Հաշվի առնելով վերոգրյալը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 9, թիվ 11, թիվ 13, թիվ 14, թիվ 16, թիվ 18, թիվ 22, թիվ 24, թիվ 26, թիվ 28, ինչպես նաև Գայի փողոցի թիվ 31, թիվ 33, թիվ 35 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և մշակում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից «Բնակարանային շինարարություն» /բաժին 06, խումբ 01, դաս 01, հոդված 5134/ հատկացնել 990000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 27

*28 փետրվար 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել Դիլիջանի համայնքների միության կանոնադրությամբ սահմանված Դիլիջանի համայնքի անդամավճարը վճարելու նպատակով կատարել ֆինանսավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջանի համայնքի անդամավճարը վճարելու նպատակով Դիլիջան համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասից «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» /բաժին 01 , խումբ 06, դաս 01, հոդված 4891/ հատկացնել 975000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
6. ՄԿՐՏՉՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 28

*28 փետրվար 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դիլիջանի երգագիտական թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի պաշտպանությունն ապահովելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել ձեռք բերել և տեղադրել պաշտպանիչ շերտավարագույրներ:
Հաշվի առնելով վերոգրյալը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և վերը նշված աշխատանքների գնման նպատակով Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից «Թանգարաններ և ցուցասրահներ» /բաժին 08, խումբ 02, դաս 02, հոդված 5122/ հատկացնել 433800 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը ներկայացնող՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 29

*28 փետրվար 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ իրենց աշխատանքների շարունակությունն ապահովելու նպատակով ֆինանսական աջակցություն ցուցաբերելու խնդրանքով:
«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպությունը շուրջ 10 տարի տարբեր ծրագրերի շրջանակներում իրականացնում է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի մշակման, ներդրման, համայնքապետարանների համակարգչային ցանցերի կառուցման, համայնքների մասնագետների վերապատրաստման և խորհրդատվության տրամադրման աշխատանքներ:
Կազմակերպության կողմից մշակված համակարգերը հաջողությամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության բազմաթիվ համայնքներում, մասնավորապես ՝ Դիլիջան համայնքում:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել ցուցաբերել ֆինանսական աջակցություն Դիլիջան համայնքում ներդրված համակարգերի սպասարկման աշխատանքների շարունակականությունն ապահովելու նպատակով:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպությանը ցույց տալ ֆինանսական աջակցություն , այդ նպատակով համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասից <Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ> /բաժին 01 , խումբ 06, դաս 01, հոդված 4639/ հատկացնել 150000դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 30

*28 փետրվար 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան քաղաքի գյուղատնտեսությամբ զբաղվող սուբյեկտների գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ մասնագիտական տեղեկատվության տրամադրման արդյունավետությունն ապահովելու նպատակով, համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել ուսուցողական ծրագրերի և փորձացուցադրական աշխատանքների կազմակերպման ծառայությունների գնում:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և գյուղատնտեսության թեմաներով ուսուցում-խորհրդատվությունների կազմակերպման, տեղեկատվական թերթիկների և համապատասխան գրականության տրամադրման, ֆերմերների առաջնային կարիքների բացահայտման և գիտական նվաճումների ու նոր տեխնոլոգիաների տեղայնացման, գյուղատնտեսական մթերքների իրացման գործունեության կազմակերպման, ուսուցողական ծրագրերի և փորձացուցադրական աշխատանքների կազմակերպման ծառայությունների գնման ֆինանսավորման նպատակով Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի «Գյուղատնտեսություն» /բաժին 04 խումբ 02 դաս 01/ 4235 հոդվածից հատկացնել 30.0հազ.դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՄԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 31

*28 փետրվար 2011թ.*

ՀԱՍՏԻՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքում մանկապատանեկան սպորտի զարգացման, ինչպես նաև համայնքի տարածքում բնակվող մանուկների ու պատանիների մասնակցությունը ֆիզկուլտուրային-մարզական միջոցառումներին ապահովելու նպատակով, համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել «Մարզահամալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել լրացուցիչ հաստիք:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով և «Իրավական ակտերի մասին» օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Մարզահամալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել փոխնօրենի 1 դրույք հաստիք՝ 50000 դրամ ամսեկան աշխատավարձով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՆՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԿՐՏՉՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 32

---

*28 փետրվար 2011թ.*

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել Կալինինի փողոցի 4 նրբ. թիվ 18 հասցեի բնակիչ Աշոտ Հակոբյանը,Անդրանիկի 2-րդ. նրբ.42տան բնակիչ Սուսաննա Ռիլիխանյանը, Սարի փողոցի 1 հասցեի բնակիչ Արամ Գրիգորյանը, Կալինինի փողոցի 1 նրբ. թիվ 6 հասցեի բնակիչ Վահե Վարդանյանը, Մոլդովական 16/21 հասցեի բնակիչ Ալբերտ Գյուլզադյանը,Այգեստան 41 հասցեի բնակիչ Ալբերտ Հակոբյանը իրենց սեփականություն հանդիսացող գույքի համար գոյացած գույքահարկի տույժերից ազատելու խնդրանքով, այդ թվում՝

- Կալինինի փողոցի 4 նրբ. թիվ 18 հասցեի բնակիչ Աշոտ Հակոբյանին պատկանող շինության համար 1998-2010թթ. ընթացքում գոյացած գույքահարկի տույժ - 6518 դրամ
- Անդրանիկի 2-րդ. նրբ.42տան բնակիչ Սուսաննա Ռիլիխանյանին պատկանող շինության համար 1998-2010թթ. ընթացքում գոյացած գույքահարկի տույժ - 27202 դրամ
- Սարի փողոցի 1 հասցեի բնակիչ Արամ Գրիգորյանին պատկանող ԴԵՅՎՈՒ մակնիշի 15 ՏU 795 պ/հ փոխադրամիջոցի համար 2008-2010թթ. ընթացքում գոյացած գույքահարկի տույժ - 12076 դրամ
- Կալինինի փողոցի 1 նրբ. թիվ 6 հասցեի բնակիչ Վահե Վարդանյանին պատկանող ՆԻՍՍԱՆ մակնիշի 44 ՍՍ 447 պ/հ փոխադրամիջոցի համար 2006-2010թթ. ընթացքում գոյացած գույքահարկի տույժ - 38935 դրամ
- Մոլդովական 16/21 հասցեի բնակիչ Ալբերտ Գյուլզադյանին պատկանող Մաքսիմ Գորկի 52 հասցեում գտնվող շինության 1998-2001թթ. ընթացքում գոյացած գույքահարկի տույժ – 25215 դրամ
- Այգեստան 41 հասցեի բնակիչ Ալբերտ Հակոբյանին պատկանող Այգեստան 41 հասցեում գտնվող շինության 1998-2004թթ. ընթացքում գոյացած գույքահարկի տույժ – 17433 դրամ :

Ուսումնասիրությունից պարզվել է, որ քաղաքացիները գտնվում են սոցիալապես ծանր պայմաններում և մուծել են շինության և փոխադրամիջոցի համար գոյացած ապառքի գումարները:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 1998թ. մայիսի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 33

*28 փետրվար 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ԴԻՄԱԾ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան և համայնքի ավագանուն են դիմել թվով 18 քաղաքացիներ հայտնելով, որ փաստացի գտնվում են սոցիալապես անապահով վիճակում և դիմումներում նշված խնդիրները ֆինանսական տեսանկյունից չեն կարող լուծել սեփական միջոցներով :

Համայնքի ղեկավարը քաղաքացիների դիմումները ներկայացրել է Դիլիջան քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը ՝ դիմումներում նշված խնդիրների լուծմանը աջակցելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը ՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ներքոնշյալ քաղաքացիներին ցույց տալ դրամական օգնություն, այդ նպատակի համար Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի «Սոցիալական պաշտպանություն» /բաժին 10 խումբ 7, դաս 1/ 4729 հոդվածից հատկացնելով 200000 դրամ, այդ թվում ՝

- ք.Դիլիջան Մոլդովական 4 բն. 18 հասցեի բնակիչ Հայկազ Վերանյանին – 10000 դրամ
- ք.Դիլիջան Շահումյան 14 բն. 8 հասցեի բնակիչ Մարգո Ամիրխանյանին - 10000 դրամ
- ք.Դիլիջան Գետափնյա 72 բն. 17 հասցեի բնակիչ Լևոն Թանանյանին -5000 դրամ
- ք.Դիլիջան Օրջոնիկիձե 77 բն. 12 հասցեի բնակիչ Նարիման Թուխիկյանին-10000 դրամ
- ք.Դիլիջան Կալինինի 175 բն.6 հասցեի բնակիչ Արմինե Նալբանդյանին – 10000 դրամ
- ք.Դիլիջան Օրջոնիկիձե 2-րդ. նրբ.19 հասցեի բնակիչ Նունիկ Հարությունյանին-15000 դրամ
- ք.Դիլիջան Գայի 84 բն. 82 հասցեի բնակիչ Կարինե Հայրապետյանին – 15000դրամ
- ք.Դիլիջան Սպանդարյան 5 հասցեի բնակիչ Արսեն Հովսեփյանին – 15000 դրամ
- ք.Դիլիջան Հովսեփյան 46 հասցեի բնակիչ Գինարգա Ջանվելյանին – 10000 դրամ
- ք.Դիլիջան Աբովյան 8 հասցեի բնակիչ Ջեմմա Առաքելյանին -15000 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 34

*28 փետրվար 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻԼԻՋԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՅԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ

- Դիլիջանի քաղաքային համայնքի Գետափնյա փողոցի թիվ 82 շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականություն հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 141-001-030-005 ծածկագրով հողում քաղ. Համլիկ Թամրազյանի կողմից կառուցվել է ինքնակամ շինություն. ավտոտնակ՝ 23.8 քմ մակերեսով:Նշված շինությանը տրվում է նոր հասցե՝ Գետափնյա փողոցի թիվ 82/13
- Դիլիջանի քաղաքային համայնքի Մոլդովական փողոցի թիվ 1 շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականություն հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 075-019 ծածկագրով հողում քաղ. Հովսեփ Ավագյանի կողմից կառուցվել է ինքնակամ շինություն. ավտոտնակ՝ 35.4 քմ մակերեսով:Նշված շինությանը տրվում է նոր հասցե՝ Մոլդովական փողոցի թիվ 1/3
- Դիլիջանի քաղաքային համայնքի Խորհուրդների փողոցի 2-րդ նրբ. թիվ 6 շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականություն հանդիսացող «Բնակավայրերի հողերի», մասնավորապես՝ բնակելի կառուցապատման հողում քաղ. Սամվել Այդինյանի կողմից կառուցվել է ինքնակամ տնտեսական շինություն՝ 12.7 քմ մակերեսով:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 35

*28 փետրվար 2011թ.*

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել Գայի 84 բազմաբնակարան շենքի թիվ 21 բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 16 հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և համայնքի սեփականություն հանդիսացող Գայի փողոցի թիվ 84 շենքի թիվ 21 երկու սենյականոց՝62.4 քառ.մետր ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի ձևով օտարել 93600դրամով(մեկ քառ.մետրի համար սահմանելով 1500դրամ):

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
6. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԵՂԻՇԵ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 36

---

*28 փետրվար 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 3376.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 6 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ 500.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. փետրվարի 22-ի թիվ 137 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող "Բնակավայրերի հողերից" 3376.0քմ ընդհանուր մակերեսով թվով 6 հողամասերը աճուրդի և 500.0քմ մակերեսով հողամասը կրկնաճուրդի ներկայացնելու մասին հարցը՝ հետևյալ աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով.
1. Լոտ 1/ՔՀ-11/ - Կամոյի փողոց թիվ 48/1, 126.0քմ, ծածկագիրը՝ 336-015, ըստ նպատակային նշանակության՝ "Բնակավայրերի հող", հատկացման նպատակը՝ ավտոլվացման օբյեկտի կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 315 000 դրամ,
2. Լոտ 2/ՔՀ-11/ - Վասիլևի փողոց թիվ 156/3, 532.0քմ, ծածկագիրը՝ 393-005, ըստ նպատակային նշանակության՝ "Բնակավայրերի հող", հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1 330 000 դրամ,
3. Լոտ 3/ՔՀ-11/ - Սարալանջի փողոց II նրբ. թիվ 2/1, 481.0քմ, ծածկագիրը՝ 053-313, ըստ նպատակային նշանակության՝ "Բնակավայրերի հող", հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1 202 500 դրամ,
4. Լոտ 4/ՔՀ-11/ - Սարալանջի փողոց V նրբ. թիվ 27, 604.0քմ, ծածկագիրը՝ 053-263, ըստ նպատակային նշանակության՝ "Բնակավայրերի հող", հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1 510 000 դրամ,
5. Լոտ 5/ՔՀ-11/ - Սարալանջի փողոց VI նրբ. թիվ 23, 817.0քմ, ծածկագիրը՝ 053-281, ըստ նպատակային նշանակության՝ "Բնակավայրերի հող", հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 2 042 500 դրամ,
6. Լոտ 6/ՔՀ-11/ - Սարալանջի փողոց VI նրբ. թիվ 25, 816.0քմ, ծածկագիրը՝ 053-282, ըստ նպատակային նշանակության՝ "Բնակավայրերի հող", հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 2 040 000 դրամ,
7. Լոտ 153/ՔՀ-10/ կրկնաճուրդ - Սարալանջի փողոց թիվ 17, 500.0քմ, ծածկագիրը՝ 053-325, ըստ նպատակային նշանակության՝ "Բնակավայրերի հող", հատկացման նպատակը՝ անհատական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
# ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 37

*28 փետրվար2011թ.*

ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 86/3 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 49.3ՔՄ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Գնել Քեռյանի կողմից Գետափնյա փողոցի թիվ 86/3 հասցեում ինքնակամ կառուցված շինությունը, որը բաղկացած է 33.1քմ մակերեսով ավտոտնակից և 49.3քմ մակերեսով տնտեսական հարկից /հաշվարկված է արտաքին չափերով/ ճանաչվել է համայնքի սեփականություն և ընդգրկվել համայնքի հաշվեկշռում:
Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. հունվարի 26-ի թիվ 45 որոշմամբ ինքնակամ շինությունը ճանաչվել է օրինական, վերջինիս նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը վերագրանցվել է /սեփականության իրավունքի վկայական՝ թիվ 2087277, տրված 01.02.2011թ./:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, վերոհիշյալ ինքնակամ շինությունը և վերջինիս սպասարկման 49.3քմ մակերեսով հողամասն օտարել քաղ. Գնել Քեռյանին, համապատասխանաբար, 223890 դրամ /ավտոտնակ՝ 56270, տնտեսական հարկ՝ 167620/ և 94360 դրամ արժեքներով:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն Գետափնյա փողոցի թիվ 86/3 հասցեում գտնվող ինքնակամ շինությունը, որը բաղկացած է 33.1քմ մակերեսով ավտոտնակից և 49.3քմ մակերեսով տնտեսական հարկից, և վերջինիս սպասարկման 49.3քմ մակերեսով հողամասը, համապատասխանաբար, 223890 դրամ և 94360 դրամ արժեքներով, քաղ. Գնել Քեռյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 38

*28 փետրվար 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՎԱՍԻԼԵՎ ՓՈՂՈՑ ԹԻՎ 32/2 ՀԱՍՑԵԻ 500.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Վալերիկ Բաղդասարյանը, Վասիլև փողոցի թիվ 32/1 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան 1010.0քմ տնամերձ հողամասին կից գտնվող /Վասիլև փողոցի թիվ 32/2 հասցեի/ 500.0քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 500.0քմ մակերեսով հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը: Այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, բնակելի տան սեփականատեր Վալերիկ Բաղդասարյանին: Նշված հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջանի Վասիլև փողոցի թիվ 32/2 հասցեի 500.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 621000 դրամ արժեքով օտարել քաղ. Վալերիկ Բաղդասարյանին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն Դիլիջանի Վասիլև փողոցի թիվ 32/2 հասցեի 500.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 621000 դրամ արժեքով քաղ. Վալերիկ Բաղդասարյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ՈՐՈՇՈՒՄ N 39**

---

*28 փետրվար 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 114/1 ՀԱՍՑԵԻ 92.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Ռոբերտ Դավթյանը, Մյասնիկյան փողոցի թիվ 114ա հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան 490.0քմ տնամերձ հողամասին կից գտնվող /Մյասնիկյան փողոցի թիվ 114/1 հասցեի/ 92.0քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի համձնաժողովը նշում է, որ նշված 92.0քմ մակերեսով հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը: Այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, բնակելի տան սեփականատեր Ռոբերտ Դավթյանին: Նշված հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 114/1 հասցեի 92.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 114264 դրամ արժեքով օտարել քաղ. Ռոբերտ Դավթյանին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 114/1 հասցեի 92.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 114264 դրամ արժեքով քաղ. Ռոբերտ Դավթյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -6　　　　Դեմ -0　　　　Ձեռնպահ -0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 40

*28 փետրվար 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 1275.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 3 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. փետրվարի 22-ի թիվ 138 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 1275.0քմ ընդհանուր մակերեսով թվով 3 հողամասերը վարձակալության իրավունքի մրցույթի ներկայացնելու մասին հարցը՝ հետևյալ մրցութային լոտերով, մակերեսներով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գներով.

1. Լոտ 1 /Վ-11/ - Գետափնյա փողոց թիվ 3/6, 560.0քմ, ծածկագիրը՝ 159-026, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ բարեկարգման, հողամասի տրամադրման ժամկետը՝ 30 տարի, հողամասի տարեկան վճարի մեկնարկային գինը՝ 28000 դրամ,
2. Լոտ 2 /Վ-11/ - Կալինինի փողոց թիվ 171/7, 89.0քմ, ծածկագիրը՝ 113-016, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ բարեկարգման, հողամասի տրամադրման ժամկետը՝ 30 տարի, հողամասի տարեկան վճարի մեկնարկային գինը՝ 26700 դրամ:
3. Լոտ 3 /Վ-11/ - 26 Կոմիսարների փողոց թիվ 20/1, 626.0քմ, ծածկագիրը՝ 272-021, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ բարեկարգման, հողամասի տրամադրման ժամկետը՝ 30 տարի, հողամասի տարեկան վճարի մեկնարկային գինը՝ 18780 դրամ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 41

---

*28 փետրվար 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 1577.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. փետրվարի 22-ի թիվ 136 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Մյասնիկյան փողոցի թիվ 37/3 հասցեի 1577.0քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքի մրցույթի ներկայացնելու և դրա տարեկան վճարի մեկնարկային գինը հաստատելու մասին հարցը, հետևյալ պայմաններով.
1. Լոտ 1 /ՔԿ-11/ - Մյասնիկյան փողոց թիվ 37/3, 1577.0քմ, ծածկագիրը՝ 313-041, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ սրճարանով զբոսայգու կառուցման, հողամասի տրամադրման ժամկետը՝ 70 տարի, հողամասի տարեկան վճարի մեկնարկային գինը՝ 47310 դրամ:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն հողամասը հետևյալ մրցութային լոտով և պայմաններով կառուցապատման իրավունքի մրցույթի ներկայացնելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել հետևյալ մեկնարկային գինը.
1. Լոտ 1 /ՔԿ-11/ - Մյասնիկյան փողոց թիվ 37/3, 1577.0քմ, ծածկագիրը՝ 313-041, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ սրճարանով զբոսայգու կառուցման, հողամասի տրամադրման ժամկետը՝ 70 տարի, հողամասի տարեկան վճարի մեկնարկային գինը՝ 47310 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0